ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2013թ. հունիսի 12 -ին

թիվ 50 -Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 և 1.15 կետերով. ***կարգադրում եմ***՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի համայնքներում 2012-2013 թվականների ընթացքում մատչելի գներով ստացված և բաշխված ազոտական պարարտանյութի և դիզելային վառելանյութի հասցեականությունը ուսումնասիրելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին՝ սույն թվականի հունիսի 13-ից- 19-ը կատարել ուսումնասիրություն և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի 2013թ. հունիսի 12-ի
թիվ 50-Ա կարգադրության

ԿԱԶՄ

Ուսումնասիրություն կատարող հանձնաժողովի

Յու. Ազատյան – ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ /հանձնաժողովի նախագահ/

Վ. Հարությունյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության, բնապահպանության բաժնի առաջին կարգի մասնագետ

Յու. Ժամհարյան - ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

Ս. Միսակյան - ՀՀ ԱԱԾ Արագածոտնի մարզային վարչության Արագածի բաժանմունքի պետ /համաձայնությամբ/

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար

Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ